

«Կանոնագրերի Հնագույն Բեկորներնու մասին, որոնք Մատենադարանի երկու գրչանդերներէն Հանուած չորս պատառիկներ (պահպանակներ) եւ:

Վերջապէս կը տրուին 'ցանկեր: Նախ կանոնադրերու յօդուածներուն սկզբնատողերը այրենական շարքով, յետոյ առարկայական ցանկը, յատուկ անուններու եւ տեղերու ցանկ, ինչպէս նաեւ էջ մը սըրբապօղոսով վրիպակներ:

Շատ կարեւոր հասարակ մըն է, որ գոհունակութեամբ կը փակենք: Հասարակ մը՝ Հատուտ պաշտման համար ամէն տեսակ իւրերով:

Կրկին յայտնելով մեր շնորհակալութիւնը Վազգէն Յակոբեանին՝ իր այս խոշոր մատակարար համար, իրեն կը մղվենք յարատեւութիւն, կամք ու կորով՝ յաջորդ հատորի: Կամ հատորներուն ամբողջացման համար:

ՍՈՒՆԱՅ ԱԶԳԱՅՐՈՒԹԻՒՆԸ: Գրեց Վարդան Պետոյեան: Կիտալաք, ուրաքով, էջ 550, պատկերազարդ, նրբաւ: 1965:

Մեզը որ Պետոյեանի այնքան սրահատնում նուիրմամբ պատրաստած այս գործը (Հրատարակուած միայն 750 տպագրանկով) կը Հրատարակուի վատորակ թղթով, վատորակ տպագրութեամբ, նկարներու վատորակ արտահանութեամբ: Աւելի ճիշդ՝ այս գործը գրաւորենաբար վրուած տեսակ մը արտահանութիւն է: Երեւանի Պետական Պատմական Թանգարանի վաստակաւոր գիտական աշխատողին այս հետաքրքրական եւ արժէքաւոր աշխատութիւնը լոյս հանուած է իբր թէ երեսէ ինկած որբի մը նման, գուրկ նախական խնամքէ՝ որուն արժանացած կը գտնենք բազմաթիւ անար-

ժան Հրատարակութիւններ Երեսանեան տըպարաններէն: Հատ երեւոյթին անտեսուած այս Հրատարակութիւնը սակայն շատ արժէքաւոր կը գտնուի եւ Հայ աղագրութիւնը, արհեստներու ծանօթութիւնը մեծապէս երախտապարտ է ու պիտի մնայ Վարդան Պետոյեանի անխնայ աշխատանքին եւ մեզի տրամադրած այս արժէքաւոր գործին համար:

Հատորին Ա. մասը կու տայ ընդհանուր տեղեկութիւններ Սասունի մասին, ուր կը յիշուին Սասոյ դաւառակները, գիւղերը՝ կու տայ տեղագրական արժէքաւոր ծանօթութիւններ բերդերու, կամուրջներու, պատմական վայրերու, վանքերու: Յետագայ հատուածը (էջ 37) նուիրուած է 1915-ի դէպքերուն եւ ցեղասպանութիւնէ. փրկուածներուն: Թայլին եւ Աշտարակ հաստատման: Բուն տպագրական մասը կը սկսի էջ 71-ով՝ դաշտաւազութիւն, այգեգործութիւն եւ բանջարաբուծութիւն, անասնապահութիւն, կաթնատնտեսութիւն, թռչնաբուծութիւն, շերամապահութիւն, մեղուաբուծութիւն, որորդութիւն եւ ձկնորսութիւն, տնայնագործութիւն: ամէն տեսակ արհեստներ, առեւտուր, տարազ, ուտելիք: Մասնաւոր հատուածներով կը ներկայացուին ընտանեկան վարք ու բարք, ամուսնութիւն (հարսանեկան եւ այլ երգեր), տղաբերք, Հիւանդութիւն (բժշկութիւն), մահ եւ թաղում, հասարակային դասակարգ, իրաւունք, Հաստատութիւն, Ժողովրդական հանելուկներ, առածներ, պատմուածքներ, կը նկարագրէ 41 խաղեր: Էջ 437-ով կը սկսի Սասնոյ քարաւանքի բառարանը, որով կ'աւարտի հատորը:

Ճաւախի է որ այս շահեկան հատորը, որուն մէջ թէեւ կան մասեր որոնք կարելի էր գեղջիկ, իրական տպագրութեամբ չէ որ լոյս կը տեսնէ:

Գ. ՔԻՒՐՏԵԱՆ,